

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

11.10.2024թ.

ք. Էջմիածին

Սույն թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում, «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում /Հասցեն՝ ք.Էջմիածին Կոմիտասի հրապարակ 0 շենք/ տեղի ունեցավ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Վազգեն Առաջինի փող., թիվ 40 շենքի 43 բնակարանի բնակիչ Կարեն Մկրտչյանի կողմից Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Շահումյան փողոցի թիվ 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում քննարկում /1-ին փուլ/:

Ելույթ ունեցան՝

Ս. Աղաջանյան – Քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Ներկայացրեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 19.09.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. հոկտեմբերի 11-ին, ժամը 11.00-ին «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում տեղի է ունենում ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Շահումյան փողոց թիվ 75/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին փուլ/։ Համայնքի ղեկավարի խորհրդականը նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ տեղեկատվությունը 19.09.24 թվականից տեղադրված է համայնքային կառավարման տեղեկատվական հարթակներում։ Հավելվեց նաև, որ շահագրգիռ հանրությունը հնարավորություն ուներ մինչև 2024 թվականի հոկտեմբերի 7-ը ներառյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ՝ գրավոր՝ Վաղարշապատի համայնքապետարան, ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սք. Մ. Մաշտոցի փող, 0 հասցեով կամ էլեկտրոնային՝ Iratvutyunn@gmail.com էլ. հասցեով։ Սակայն, այդպիսիք չեն ստացվել։ Հանրային քննարկման հայտարարությունը հրապարակվել է «Թիվի Ալիք» թերթում՝ 19.09.2024թ.։

Ա. Սահակյան- Ճարտարապետ

Ճատարապետը ներկայացրեց նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շինության էքզիզային տարբերակը։ Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3584քմ, կառուցապատման մակերեսը՝ անջրանցիկ տարածքները ներառյալ 2149քմ, կանաչապատ տարածք 1435քմ /40%, շենքի ընդհանուր մակերես 15777.4քմ։ Նախատեսվում է կառուցել մեկ ստորգետնյա և 12 վերգետնյա հարկերով բազմաֆունկցիոնալ բնակելի շենք, ստորգետնյա

հարկը՝ ավտոկայանատեղի, նախատեսված 64 ավտոմեքենանրի համար, իսկ վերգետնյա հարկերից 1-ին և 2-րդ հարկերը նախատեսվում են հասարակական նշանակության տարածքներ, 3-ից 12-րդ հարկերը բնակելի՝ 119 բնակարան: Ճարտարապետը հավելեց, որ նկուղային հարկերը հնարավոր է օգտագործել նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման համար /որպես ապաստարան/:

Ա. Գալոյան

Ներկայացրեց փորձաքննական գործընթացը, նշելով, որ ըստ Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների, նախատեսվող գործունեությունը երթակա է բնապահպանական փորձաքննության և այն անցկացվելու է Բ կատեգորիայի ընթացակարգով: Պատրաստվելու է համապատասխան հաշվետվություն, որով ներկայացվելու է առկա իրավիճակը, շրջակա միջավայրի իրավիճակը, նախատեսվող գործունեությունն իր տեխնոլոգիական ցուցանիշներով: Ներկայացվելու են հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք պայմանավորված են լինելու փոշու արտանետման տեսքով և շինհրապարակում շահագործվող շինտեխնիկայի դիզելային վառելիքի այրումից առաջացած արտանետումներով: Հաշվետվությամբ մանրամասն ներկայացվելու են բացասական ազդեցությունների կանխարգելիչ միջոցառումները՝ տարածքի ցանցապատում, շինհրապարակի ջրցանում, շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում, նմանատիպ մի շարք այլ միջոցառումներ: Նաև նշեմ, որ շինարարական աշխատանքների ավատից հետո տարածքը կկանաչապատվի և կբարեկարգվի՝ բնակլիմայական պայմանների համապատասխան:

Հարցերի բացակայության հիմքով հանրային լսումն ավարտվեց:

Որոշում.

Որոշվեց հանրային լսման արձանագրությունը ներկայացնել համայնքի ավագանուն:

Հանրային լսման պատասխանատու և

արձանագրող՝ Մ. Պողոսյան

Վարող՝ Ս. Աղաջանյան

Նախագծի ճարտարապետ՝ Ա. Սահակյան

